ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 2565-Ա « 18 » մայիսի 2026 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼԱՅՊՑԻԳ ՔԱՂԱՔ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածով և հիմք ընդունելով «Երևանի և Լայպցիգի միջև մշակութային տարի հաստատելու մասին» համաձայնագրի շրջանակներում Լայպցիգի քաղաքապետարանի կողմից ստացված հրավերը, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության պետ Լիլիթ Յավրյանի 26.02.2026 թվականի N Ն/11616-26 զեկուցագիրը և Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի արտաքին կապերի վարչության պետ Դավիթ Գևորգյանի 14.05.2026 թվականի N Ն/31059 զեկուցագիրը՝ աշխատանքային պարտականությունների կատարման շրջանակներում, 2026 թվականի հունիսի 1-ից 4-ը կազմակերպվելիք փորձի փոխանակման ծրագրին մասնակցելու նպատակով.

1.Երևանի քաղաքապետարանի պատվիրակությանը 2026 թվականի հունիսի 1-ից 4-ը ներառյալ գործուղել Գերմանիայի Դաշնային Հանրապետության Լայպցիգ քաղաք հետևյալ կազմով.

Մարիա Աղաջանովա	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի տեղակալ
Լիլիթ Յավրյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության պետ
Լուսինե Սարգսյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մարդկային ռեսուրսների կառավարման վարչության պետ
Վերգինե Սիմոնյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի արտաքին կապերի վարչության արտաքին հարաբերությունների բաժնի պետ
Միլենա Փարսադանյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության քաղաքացիների սպասարկման բաժնի պետ

2.Ընդունել ի գիտություն, որ գործուղման հետ կապված բոլոր ծախսերն իրականացվում են Երևան քաղաքի 2026 թվականի բյուջեի միջոցների հաշվին:

3. Աշխատակազմի քարտուղարի տեղակալ Մարիա Աղաջանովայի բացակայության ընթացքում պարտականությունների կատարումը վերապահել աշխատակազմի քարտուղարի տեղակալ Վարազդատ Ահարոնյանին:

4. Աշխատակազմի քարտուղարության պետ Լիլիթ Յավրյանի բացակայության ընթացքում պարտականությունների կատարումը վերապահել աշխատակազմի քարտուղարության պետի տեղակալ Հովհաննես Հովհաննիսյանին:

5. Աշխատակազմի մարդկային ռեսուրսների կառավարման վարչության պետ Լուսինե Սարգսյանի բացակայության ընթացքում պարտականությունների կատարումը վերապահել նույն վարչության պետի տեղակալ Վարդանուշ Բոյախչյանին:

6. Աշխատակազմի արտաքին կապերի վարչության արտաքին հարաբերությունների բաժնի պետ Վերգինե Սիմոնյանի բացակայության ընթացքում արտաքին կապերի վարչության արտաքին հարաբերությունների բաժնի պետի պարտականությունների կատարումը վերապահել նույն վարչության արարողակարգի բաժնի պետ Լուսինե Ղարիբյանին:

7. Աշխատակազմի քարտուղարության քաղաքացիների սպասարկման բաժնի պետ Միլենա Փարսադանյանի բացակայության ընթացքում պարտականությունների կատարումը վերապահել նույն վարչության ընդհանուր բաժնի պետ Արփինե Մարտիրոսյանին:

8. Գործուղումից վերադառնալուց հետո, 3 աշխատանքային օրվա ընթացքում, փաստացի կատարված ծախսերի հաշվետվությունը և դրանք հավաստող փաստաթղթերը ներկայացնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՏԱՐՈՂ՝ ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

X

ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

Signed by: PAMBUKHCHYAN ARMEN 3611840246